«Հոսանք»-ի Հավատամքը

Մեր Նպատակը Արարչի Նպատակն է

Ամեն ազգ իր պատմության մեջ ունենում է օրհասական ու շրջադարձային ժամանակներ, և մենք կարծում ենք, որ հայ ազգը իր պատմության ամենաօրհասական ժամանակներն է ապրում: Ներկա գրեթե բոլոր իրադարձությունները մեզ ցույց են տալիս, որ Հայաստանը երբեք չի մտել միջազգային հակաարիական ուժերի «Համաշխարհային նոր աշխարհակարգի» ծրագրերի մեջ՝ որպես անկախ ինքնիշխան տարածք և հզոր պետություն: Այն միշտ խոչընդոտ է համարվել բոլոր առումներով: Միջազգային հանրության վերաբերմունքը տեսանք 2020 թ.-ի 44-օրյա դավադիր պատերազմի ժամանակ, երբ Արցախը ողջ աշխարհի դեմ մնաց մենակ և դրվեց համաթուրքական և ջիհադամասոնական զոհասեղանին: Մեզ համար պարզ է, որ Արցախի դեմ դավադրությունը ուղիղ դավադրություն էր Հայկական պետականության դեմ, և դրա վերջնական նպատակը Հայոց ցեղասպանությունը ավարտին հասցնելն է: Այդ է պատճառը, որ մեր մեջքը կոտրելով՝ հիմա էլ հարձակվել են մեր ողնաշար Սյունյաց աշխարհի վրա:

Բացի արտաքին վտանգներից՝ կան, իհարկե, անթիվ ներքի՛ն խնդիրներ, ինչպես, օրինակ, պետական ու բանկային կոռումպացված համակարգ, դավաճանական ու հակահայ իշխանություն, ժամանակավորապես հաշմանդամ դարձած բանակ և ազգին պառակտող ու շփոթեցնող հարյուրից ավել կուսակցություններ ու կազմակերպություններ, որոնց մեծ մասը օտարերկյա հետախուզությունների գործակալներով լի են: Գրեթե բոլորը ծառայում են օտարերկրյա շահերին, և նրանք, որոնք այդպիսին չեն, միասնության անիմաստ և անբովանդակ կոչեր են անում՝ առանց իրենցից որևէ լուրջ բան ներկայացնելու: Սա է առաջացնում այժմյան ներքին քաղաքական խայտառակ թոհուբոհը, որի պատճառով այդ կուսակություններն ու կազմակերպությունները հանրության լայն զանգվածներին վստահություն չեն ներշնչում: Մեզ համար անընդունելի է քաղաքական դաշտում համատարած քծնանքը՝ փողի կամ սեփական շահերը առաջ տանելու համար:

Զազրելի է նաև այն, որ մեր քաղաքական դաշտում էությամբ արևմտամետ լիբերալները ու սովետամետ կոմունիստները հանդես են գալիս ազգայնական «մորթիով» ու մարդկանց խաբելով՝ մոլորեցնում և շեղում են ճշմարտությունից ու իսկական ազգայնականութունից:

Այս ամենը արժանապատիվ հայրենասերների շրջանում հասկանալիորեն մեծ հիասթափություն ու հուսահատություն է առաջացնում: Սակայն այստեղ ո՛չ ռուսներն են մեղավոր, ո՛չ անգլոսաքսոնացիները, ո՛չ էլ նույնիսկ մեր ոխերիմ թշնամիները: Մենք ենք մեղավոր մեր բոլոր բացթողումների ու խնդիրների համար: Հարկավոր է կրել այս կարևորագույն պատասխանատվությունը, որպեսզի կարողանանք մեր մեջ ուժ գտնել այդ խնդիրները լուծելու համար: Շատերին թվում է, թե այլևս հնարավորություն չունենք հզորանալու, և որ անիմաստ է նույնիսկ մի բան փորձել կամ անել: Դրան հետևում են անտարբերությունը և արտագաղթելու մտքերը. այս երկուսը մեր Հայրենիքը տանում են կործանման: Սակայն մենք հավատում ենք, որ քանի դեռ հայ ազգը շունչ է քաշում, կարող է ոտքի կանգնել, եթե կա ոտքի կանգնելու վճռական կամքը: Հայը աշխարհին բազմիցս իր բազկի ուժով ցույց է տվել, որ երբ միասնական է լինում ու հույսը դնում միմիայն իր վրա, դառնում է անհաղթ: Ոչ մեկը ծնկաչոք ազգի հետ չի բանակցում, ոչ մեկը մուրացկանին չի աջակցում, ոչ մեկը մեր կռիվը մեր փոխարեն չի տալու: Մեր մեջ ուժ գտնելով պետք է ոտքի կանգնենք և հետո՛ փնտրենք դաշնակիցներ և ոչ՝ հակառակը: Եթե ուզում ենք դաշնակիցներ ունենալ, պետք է նախ հզորանանք, քանի որ այս աշխարհում թույլերը բարեկամներ չեն ունենում: Մենք չենք կասկածում մեր ազգի ներուժին: Հասկանում ենք, որ առայժմ ցեղի հոգին ժամանակավորապես քնած է, բայց դա երկար չի տևելու: Ցեղի հոգին վաղ թե ուշ կզարթնի և կցնցի ողջ աշխարհը: Եթե վաղ անցյալում եղել ենք հզոր պետություն, նշանակում է մեր գենի մեջ կրկին այդպիսին դառնալու ներուժը ունենք: Համոզված ենք, որ լուսահոգի Սպարապետն էլ էր դրան հավատում, երբ ասում էր՝ «21-րդ դարը, անկասկա՛ծ, մերն է լինելու»:

Մեր երակներում դեռ հոսում է Հայկ Նահապետի, Արգիշտիի, Տիգրան Մեծի, Վարդան Մամիկոնյանի, Աշոտ Երկաթի, Դավիթ Բեկի, Անդրանիկի և Մոնթեի արյունը: Հայ ազգի բոլոր հերոսների կատարած սխրանքները մեզ ոգևորում ու քաջալերում են, որ շարունակենք նրանց գործը՝ հանուն մեր ապագա սերունդների:

Միջազգային ուժերը, որքան էլ ուզեն, չեն կարող մեզ պառակտել, եթե մեր մեջ լինի համախմբող գաղափարական հոսանք: Եթե մեր երազանքը ընդամենը անորոշ ցանկություն չլինի, եթե մենք բացարձակապես նպատակադրված ենք այն ի կատար ածելու, ապա ոչինչ մեզ չի կարող կանգնեցնել:

Ամեն դեպքում պետք է լավ հասկանանք մեր խնդիրները, որոնք միայն քաղաքական ոլորտին չեն բնորոշ, այլ համատարած են մեր ողջ հասարակության մեջ: Քաղաքական խնդիրները ընդամենը մեր հոգևոր աշխարհում գտնվող խնդիրների արտացոլանքն են: Այդ է պատճառը, որ ազգին համախմբել ցանկացող յուրաքանչյուր

քաղաքական շարժում նախ և առաջ պետք է ունենա հոգևոր բնույթ և հիմք՝ ճշգրիտ գիտություններով հիմնավորված: Մենք ոչ թե կարծում ենք, որ հոգևորը և գիտությունը իրարամերժ են, որը դարերով թշնամանք է սերմանել գիտնականների ու հոգևորականների միջև, այլ վստահ ենք, որ շատ բնական ձևով իրար համապատասխան են: Չենք կարծում, թե հոգևորականները չպիտի խառնվեն քաղաքական կյանքին: Եթե նրանք չզբաղվեն քաղաքականությամբ, կզբաղվեն փոքրոգիները: Առհասարակ, եթե իսկական գիտնականները խառնվեին քաղաքականությանը, այսքան տգետ մարդիկ չէին լինի, և եթե հոգևորականները խառնվեին, այսքան անհոգի մարդիկ չէին լինի մեր պետության ու հասարակության մեջ:

Բարեբախտաբար մեր հերոս նախնիները՝ ի դեմս Նժդեհի ու Հայկ Ասատրյանի, մեզ համար հիմնադրել են ցեղակրոնությունը՝ արյան և հողի դավանանքը, որը հենց այդ հոգևոր հիմքն է՝ մեր հիվանդությունների դեղամիջոցն ու աշխարհայացքի կողմնացույցը: Հետևաբար՝ մենք պարտավոր ենք նրանց գաղափարները արդիականացնելով վերածել մարտական շարժման և հասցնել պետական աստիճանի, տանել դեպի վերջնական հաղթանակ:

Հինգ հազար տարի չենք ապրել, պայքարել ու արյուն թափելով մարտնչել մարդկության հորդաների դեմ, որպեսզի մի թրքասեր հակահայ աղանդ գա ու ներսից մեր երկիրը կործանելով՝ թերթի մեր պատմության վերջին էջը: Դավաճաններին, պատեհապաշտ սրիկաներին, ավազակներին ու նրանց բոլոր ծառաներին կուղարկենք գրողի ծոցը: Մենք պարտավոր ենք ինքներս մեր «պալատը» մաքրել, ինչպես Ոդիսևսը իր պալատը մաքրեց երեք հազար տարի առաջ: Մեր Հայրենիքը պիտի մաքրենք աղանդներից, գաղտնի կազմակերպություններից, օտարերկրյա շահերին սպասարկող կուսակցություններից և կազմակերպություններից: Գիտակցում ենք, որ այս ամենը, ինչ մեր դեմ արվել է դարեր շարունակ, ունենալու է հուժկու հակազդում, քանի որ Մեխանիկայի երրորդ օրենքը մեզ հուշում է՝ ամեն ազդում ունի հավասար և հակառակ հակազդում: Հիմա ապատեղեկատվական հեղեղի պատճառով, առավել քան երբևէ, հասարակության մեջ մեծ է խառնաշփոթությունը, պառակտումը և քաոսը: Այս սերմերը շատ վաղուց են ցանվել, մենք պարզապես հիմա ենք այդ ամենը քաղում: Այդ երևույթի հակազդումը հենց հոսանքն է՝ մասնիկների ուղղորդված շարժումը, որը միասնության նախադրյալն է: Առանց հոսանքի՝ չի կարող լինել համախմբում և քաղաքական ու հասարակական համաձայնություն: Եթե ազգի մտավորականությունը գաղափարապես ճիշտ ուղու վրա դրվի, միասնությունը ինքնըստինքյան կհաջողվի, և լայն զանգվածներն էլ կհետևեն: «Հոսանքի» առաքելությունը ազգին հենց այդ ճիշտ ուղու վրա դնելն է՝ քարոզելով ու անձնական օրինակ ծառայելով: Եթե ազգովի նույն կամքը չունենանք, չենք կարող այդ անհրաժեշտ հոսանքը ստեղծել: Հետևաբար՝ մեր նշանաբաններից մեկն է՝ «Մեկ ազգ, մեկ երկիր, մեկ կամք»: «Հոսանքը» միանշանակ համահայկական ու

համարիական ցեղակրոն շարժում է, որի բացահայտ թշնամիներն են թուրքերը, միջազգային սիոնիստները, մարքսիստները և նրանց հետ համագործակցող բոլոր դուրսպրծուկները: Այս հավատամքն էլ յուրաքանչյուր ցեղակրոն արիացու հավատամքն է:

«Հոսանքը» մերժում է այժմյան շինծու ու ազգակործան ժողովրդավարական համակարգը, որը երկրի ճակատագիրը դնում է հասարակության մեջ գտնվող տգետների, տհասների և կառավարության մեջ գտնվող խամաճիկների ձեռքերում: Այդ է պատճառը, որ մեր Հայրենիքը վերածվել է քաղաքական կրկեսի: Ժողովրդավարությունը թույլ ու պղծված պետական իմունային համակարգ է, որը կարող է հեշտությամբ վարակվել տարատեսակ մարդկային «վիրուսներով»: Այս ժամանակակից տեղեկատվական դարում ժողովրդավարությունը ոչ միայն սուտ է և կեղծիք, այլև կործանարար աղետ է, որը մեր ողջ ցեղին ու քաղաքակրթությունը տանում է դեպի անդունդ: Այն ընդամենը քողարկված բռնապետություն է, որը մարդկանց ազատության պատրանք է տալիս: Մենք գերադասում ենք «արքայապետությունը», որը կլինի ոչ միայն արժանապատիվ ու խելացի, այլև՝ առաջնորդության ջիղ ունեցող մարդկանցից՝ արքաներից բաղկացած պետություն: «Արքա» հենց նշանակում է արիների առաջնորդ (Ար+ք+ա): Որպեսզի պետությունն ու հասարակությունը ճիշտ գործեն, անհրաժեշտ են առաջնորդներ՝ արքաներ, և ոչ՝ ուղղակի ղեկավարներ ու պաշտոնյաներ՝ «թագ կրողներ», որոնք ընդամենը թղթեր են ստորագրում ու օրենքներ անցկացնում: Կյանքի յուրաքանչյուր բնագավառ պիտի ունենա իր արքան, և հիերարխիկ սկզբունքների համաձայն՝ այդ արքաները պետք է ենթարկվեն գագաթնակետում գտնվող գերագույն Արքային: Այս նախատիպը ամբողջությամբ համահունչ է բնության օրենքներին, քանի որ արքաներ դառնում են նրանք, որոնք բնության կողմից ընտրված են ու օժտված այդ հատկանիշներով: Այսպիսով՝ կունենանք գործողությունների կառավարություն՝ դատարկ խոսքերի ու կեղծ խոստումների կառավարության փոխարեն: Կունենանք մի կառավարություն, որը իրոք կնպաստի ազգային շահերին, ոչ՝ օտարերկրյա: Ժողովուրդը միայն առաջնորդներից բաղկացած պետությանը կարող է հարգել, վստահել, սիրել և վերջապես՝ հետևել:

Ոչ մի երկիր կամ գերտերություն իրավունք չունի մեզ ազատություն ու խաղաղասիրություն քարոզելու, քանի որ Հայոց պատմությունը ապացուցել է բոլորին, որ հայ ազգից ավելի ազատատենչը ու խաղաղասերը չկա: Սակայն խաղաղությունը կարող ենք միմիայն պարտադրել և ոչ՝ մուրալ: Իրավունք չունենք նույնիսկ խոսելու խաղաղության մասին, եթե պատրաստ չենք պատերազմի: Կարող ենք խաղաղություն պարտադրել միայն այն դեպքում, եթե ազգովի դառնանք բանակ՝ ի ծնե դաստիարակված լինելով զինվորական հոգեբանությամբ: Եթե իսկապես արժևորում ենք խաղաղությունը, սա չենք կարող աչքաթող անել, որովհետև միայն հզոր Հայաստանով է հնարավոր այս տարածաշրջանում կայունություն ու

խաղաղություն հաստատել: Ցանկացած երկրում, հատկապես՝ պատերազմում գտվող երկրում, ինչպիսին մեր երկիրն է, դասալքությունը պիտի դատապարտվի ու դավաճանություն համարվի, և դասալիքները չպիտի կարողանան իրենց գլուխները բարձր պահել: Ապագա արիական պետության մեջ բանակում ծառայելը կհամարվի իսկական մկրտություն՝ տղային տղամարդ դարձնելու ամենակարևոր գործընթացը: Ազգային բանակ ունենալու համար պիտի ունենանք իսկապես պատրաստ պահեստազորայիններ, որոնք տարին մի քանի անգամ մի քանի շաբաթով կկանչվեն զինվորական վերապատրաստումների: Այլևս մեր հույսը չպիտի դնենք միայն հայ զինվորի հերոսական ոգու վրա, թեպետ պատմության մեջ մեզ դա է հաճախ փրկել: Այնուամենայնիվ պատրաստականությունից կբխի պատրաստակամությունը, և մեր զորքի պատրաստականությունը այլևս միայն պաշտպանողական բնույթ չպիտի կրի: Ապագա հայ ռազմիկները պիտի նաև պատրաստվեն հարձակվողական գործողությունների համար, քանի որ պաշտպանվելու լավագույն միջոցը հարձակումն է: Բոլորը՝ երիտասարդից մինչև տարեց, և ծայրահեղ դեպքերի համար նաև՝ բոլոր կանայք, պարտադիր պետք է պատրաստ լինեն մարտի կամ գոնե որոշ չափով ռազմական հմտություններ ձեռք բերած լինեն: Որքան քրտինք թափենք խաղաղության ժամանակ, այնքան ավելի քիչ արյուն կթափենք պատերազմի ժամանակ: Հայաստանը ևս պետք է վերածվի անառիկ ամրոցի՝ ժամանակակից դարաշրջանի «Սպարտայի», քանի որ վստահ ենք, որ այս տարածաշրջանում՝ աշխարհի ամենավտանգավոր խաչմերուկում, գոյատևելու ու ծաղկելու համար ուրիշ ձև չկա: Բոլոր հայկազուն երիտասարդները պետք է առողջ ապրելակերպի միջոցով կաշվի պես կոշտանան ու պողպատի պես պնդանան: Պետք է արշավներ նախաձեռնվեն ալկոհոլի օգտագործման, ծխելու և ազգի առողջությունը փչացնող այլ վնասակար սովորությունների դեմ, քանի որ առողջ ազգը պիտի բաղկացած լինի առողջ անհատներից:

Ապագա հայկազունը կընտելացնի միտքը և կկոփի մարմինը. մարմնի կոփումը անհրաժեշտություն է, որովհետև այդպիսով մենք անուղղակիորեն կոփում ենք հոգին: Հայկազուններին կսովորեցնենք ռազմիկ լինելու կարևորությունը, որովհետև ավելի լավ է լինել ռազմիկ պարտեզում, քան այգեպան՝ մարտի դաշտում: Հայոց փրկությունը միայն զենքով է լինում, դրա համար մենք չենք կարող դեմ լինել զենք կրելու իրավունքին, և հավատում ենք, որ իսկական հայ-արիական պետության մեջ բոլոր արժանապատիվ ու առողջ քաղաքացիները, հատկապես՝ սահմանին ապրող մեր հայրենակիցները պետք է ունենան իրենց սեփական զենքերը: Առանց մեր ողջ հասարակությունը ռազմականացնելու՝ չենք կարող ազգ-բանակ դառնալ: Դեմ ենք թրքասիրությանն ու Հայաստանի թրքացմանը, և եթե ուզում ենք պահպանել մեր անկախությունը՝ մեր Հայրենիքը չվերածելով վիլայեթի կամ գուբեռնիայի, ուրիշ ընտրություն, քան ազգ-բանակն է, չունենք: Դա է հայ մնալու միակ ճանապարհն ու երաշխիքը: Հայրենիքի փառքի համար ծառայելը ամենամեծ պատիվը պիտի

համարվի ապագա ամեն հայկազունի սրտում: Այսպիսով՝ կարող ենք ստեղծել նվիրյալ մահապարտների սերունդ, որը ոչ միայն կկարողանա վերջնականապես լուծել Արցախյան հիմնախնդիրը՝ Արցախը ամբողջովին միավորելով Հայաստանին, այլև կկարողանա իրականացնել ամեն զտարյուն հայի ամենաբաղձալի երազանքը՝ Մեծ Հայքի վերակենդանացումը:

Այս երազանքը իրականացնելու համար, իհարկե, պետք է սթափ դիտարկենք և հաշվի առնենք մեր ներկա ռեսուրսները: Բնականաբար քանակը մեր թշնամին է այս հարցում, քանի որ երեք միլիոն բնակչություն ունեցող արիական ազգը շրջապատված է հարյուր միլիոն հայատյաց թուրքերով: Այս իրավիճակը հավասարակշռելու համար Հայաստանում պետք է առավել քան երբևէ շեշտը դնենք գիտությունը զարգացնելու վրա: Աշխարհին սպասում է մեծ էներգետիկ ճգնաժամ, և մենք չպիտի այս հին տեխնոլոգիաները ձեռք բերելու հետևից ընկնենք, որովհետև այդպես ոչ մի տեղ չենք հասնի: Եթե թռիչքային աճ ենք ուզում արձանագրել, մենք՝ հայերս, պետք է ստեղծենք ամբողջովին նոր գիտություն: Ինչպես հազարամյակներ առաջ մեր նախնիները հայտնաբերեցին երկաթը, ստեղծեցին անիվը ու մարտակառքը, և դրանց շնորհիվ առաջ անցան մյուս բոլոր ազգերից, այնպես էլ մենք այս ժամանակակից դարում պիտի ստեղծենք լիովին նոր սկզբունքներով աշխատող էներգիա ստանալու միջոցներ և տեխնիկական զենքեր, եթե ցանկանում ենք այս տեխնոլոգիական մրցման մեջ առաջ անցնել բոլորից: Հետևաբար՝ պետությունը պետք է ամեն ինչով ապահովի ու աջակցի գիտնականներին ու ճարտարագետներին, որպեսզի նրանք արտագաղթելու մտքեր անգամ չունենան:

Գիտությունը զարգացնելու համար նախ և առաջ պետք է ապահովենք պարենային անվտանգությունը, և դա կարող ենք անել միայն այն պարագայում, երբ Հայաստանը կարողանա իր բնակչությանը ինքնուրույն կերակրել՝ առանց դրսից որևէ ուտելիք ներմուծելու: Սա պահանջում է, որ մենք գյուղատնտեսության մեջ հեղափոխություն անենք՝ շեշտը դնելով հողագործության ու բուսակերության և ոչ՝ անասնապահության ու մսակերության վրա: Համոզված ենք, որ այդ ոլորտում ճիշտ քայլեր անելով՝ մենք կկարողանանք նույնիսկ մեր ներկայիս տարածքով հեշտությամբ կերակրել մեր ողջ բնակչությանը՝ չունենալով սննդի պակաս: Անհեթեթություն է սովի այս մակարդակը մեր երկրում, երբ ունենք բերրի հողեր, հրաշալի բնություն ու գործազուրկ մարդիկ, որոնք պատրաստ են աշխատել: Դրախտավայրում չի կարող սով լինել, եթե գյուղատնտեսությունը ճիշտ ռելսերի վրա դրվի:

Բանվորն ու գյուղացին միշտ կլինեն մեր Հայրենիքի հենասյունն ու մեր սահմանին կանգնած հայ զինվորի թիկունքը, հետևաբար՝ պետության պարտականությունն է՝ բանվորներին ու գյուղացիներին ապահովել ու նեցուկ լինել տարբեր հարցերում: Այո՛, առանց գիտնականների՝ մարդկությունը առաջ չի գնա, բայց առանց բանվորների ու գյուղացիների՝ մարդկությունը ընդհանրապես գոյություն չի էլ ունենա: Զարգացող գյուղատնտեսություն ստեղծելու համար պետք է փոխվի մեր

ընդհանուր վերաբերմունքը՝ բնության ու կենդանական աշխարհի նկատմամբ: Բնապահպանական հայացքներով պիտի հնարավորինս անաղարտ պահենք մեր Հայրենիքի բնությունն ու էկոհամակարգը: Ձգտում ենք ավելի մաքուր, ավելի կանաչ աշխարհ տեսնել, սակայն չպիտի տարվենք «կանացի» այլասիրությամբ՝ անտրամաբանական կարեկցանք ցուցաբերելով՝ ի վնաս մեր ցեղի: Ձատագովն ենք «առնական» այլասիրության, որով կարող ենք, չզիջելով ու հետապնդելով մեր ցեղի շահերը, կարեկցանք ցուցաբերել կենդանիների, բնության, ինչպես նաև՝ մարդկության մյուս ցեղերի նկատմամբ, որոնք մեր ցեղի թշնամիները չեն: «Առնական» այլասերի նպատակն է նախ և առաջ բնության ամենալավ տեսակների պահպանումը, զարգացումը ու բազմացումը՝ միաժամանակ չվնասելով բնության մյուս արարածներին: Չպիտի թույլ տանք, որ մանիպուլատորները շահարկեն ու մեր դեմ օգտագործեն արիական ցեղի հանդուրժողականությունն ու այլասիրությունը: Ձգոնությունը միշտ պիտի պահպանվի, քանի որ ազատության գինը հենց հավերժ զգոնությունն է:

Այո՛, այս աշխարհում հաղթում է ուժեղը և ոչ՝ արդարը, բայց դա չի նշանակում, որ ուժեղը պիտի անարդար կամ չար լինի: Ընդհակառակը՝ այս աշխարհում բարին ու արդարն են ամենաուժեղը ու քաջը, քանի որ «բարի» բառի մեջ կա հենց «արի» արմատը:

Մեզ համար մեր սերը մեր ազգի հանդեպ ամենաոգևորիչն է, սակայն հասկանում ենք, որ ատելու կարողությունը Արարիչը մեզ ինչ-որ իմաստի համար է տվել: Սերը առհասարակ ամենագեղեցիկ հրաշքն է այս աշխարհում, բայց առանց մահացու ատելության նրա հանդեպ, ինչն սպառնում է այն ամենին, ինչ մենք սիրում ենք, սերը դատարկ խոսք է, գրավիչ բառ՝ հիպիների ու վախկոտների համար: Սակայն չպիտի թույլ տանք, որ այդ ատելությունն ու զայրույթը մեզ կուրացնի ու խորտակի, այլ պիտի օգտագործենք որպես վառելիք՝ ճիշտ նպատակին հասնելու համար, ինչպես վառարանն օգտագործում ենք տունը տաքացնելու և ոչ՝ հրկիզելու համար:

Ամեն դեպքում մերժում ենք չարությունը՝ այն համարելով արարչաստեղծությունից ու բնությունից շեղված անբնական երևույթ: Մեր ժամանակներում ոչ թե համատարած չարությունն է այդքան սարսափելի, այլ այն, որ մենք ոչ միայն հանդուրժում ենք չարությունը, այլև մեր միամտությամբ ու կարճատեսությամբ պաշտպանում ու նույնիսկ պաշտում ենք այդ նույն չարիքը: Որքան հանդուրժում, պաշտպանում և պաշտում ենք այդ չարիքը, մենք ինքներս ենք չարանում: Հետևաբար՝ ամեն գնով անարդարությունը ու չարությունը պիտի պատժվեն, քանի որ չպատժվելու դեպքում անարդարությունն ու չարիքը անգթորեն կշարունակվեն ու կտարածվեն՝ առանց դադարի: Սրանից հետևում է մեր բարոյական սկզբունքներից մեկը. մեր ատելի ու ոխերիմ թշնամիներին կարող ենք ներել միմիայն պատժելուց հետո:

«Հոսանքը» դատապարտում է Հայրենիքը թալանող վաշխառուական բանկային համակարգը, որի պատճառով միջազգային բորենիները կամաց-կամաց արնաքամ են անում մեր երկիրը: Հետևաբար՝ վաշխառությունը պիտի արգելվի սահմանադրությամբ, և վաշխառությամբ զբաղվողները պիտի խստիվ պատժվեն: Գալիք համաշխարհային տնտեսական փլուզումը մեզ հնարավորություն կտա ազատվելու տխրահռչակ կենտրոնական բանկից և դրա փոխարեն հաստատելու ազգային պետական բանկ, որը մեր երկրի ռեսուրսները չի հանձնի միջազգային պարտքերի դիմաց: Երկրում բոլոր տնտեսագետների ուշադրության կենտրոնում պիտի լինի այդ հայ ազգային պետական բանկի ստեղծումը: Մի տնտեսություն և քաղաքակրթություն, որի առանցքում վարկերն ու սպեկուլյացիաներն են, և ոչ՝ արդար ու ծանր աշխատանքը, դատապարտված է կործանման: Արյունռուշտ վաշխառուններին պետք է վտարենք մեր «տաճարից», ինչպես Հիսուսը դա արեց երկու հազար տարի առաջ: Միայն այդպես կարող ենք Հայաստանի ընդերքը ու տնտեսությունը ամբողջությամբ ազգայնացնել:

Մերժում ենք սիոնիստների ստեղծած կապիտալիզմը և կոմունիզմը (մարքսիստական սոցիալիզմը), որոնք մեզ համար նույն ջհուդական մետաղադրամի երկու տարբեր կողմերն են, և որոնց երկուսի նպատակը նույնն է՝ ստրկացնել աշխատասեր արժանապատիվ մարդուն. առաջինը՝ կապիտալի միջոցով, երկրորդը՝ բռնի ուժով: Կոմունիզմը, որը հասարակությանը արհեստականորեն բաժանում ու իրար դեմ է հանում դասակարգերին, իրական սոցիալիզմ չէ, ավելի ճիշտ՝ սոցիալիզմի պղծված տարբերակն է, որը բոլորին խոստանում է հավասար արդյունք՝ հաջողակ, որակյալ ու աշխատասեր մարդկանց իջեցնելով դատարկաբան, ծույլ մարդկանց մակարդակին: Դրա համար կոմունիզմից վարակված բոլոր պետությունները տառապում են աղքատությունից ու գործազրկությունից: Չմոռանանք նաև, որ կոմունիզմը ավելի շատ մարդ է սպանել պատմության մեջ, քան որևէ այլ գաղափարախոսություն: Մենք գաղափարապես ու էությամբ հակակոմունիստ ենք և խիստ դեմ ենք «ազգայնականությամբ» քողարկված բոլշևիզմի կամ ԽՍՀՄ-ի հանդեպ համակրանքին՝ այն համարելով շատ վտանգավոր՝ ազգային ցանկացած շարժման համար: Ցեղակրոնը հավատում է, որ աշխարհի պատմությունը ոչ թե դասակարգերի միջև պայքարի պատմությունն է, այլ՝ ցեղերի միջև պայքարի:

Ինչ վերաբերում է կապիտալիզմին՝ փողը, կամ կապիտալը մեզ համար պետք է ծառայի որպես փոխանակման միջոց՝ կատարված աշխատանքի համար, և փող վաստակելը երբեք չպիտի դիտարկվի որպես գերագույն նպատակ, ինչպես տեսնում ենք կապիտալիստական երկրներում: Դա հասարակությանը հասցնում է ագահության գագաթնակետին, և լավ գիտենք, որ ագահությունը ամեն ինչ կործանում է: Բացարձակ դեմ չենք հարուստներին ու չենք հավատում, որ բոլորը կարող են հավասար հարստություն ունենալ, բայց ազգային պետությունը չպիտի

թույլ տա, որ ագահ հսկա կապիտալիստները կարողանան իրենց կապիտալով օրենքներ փոխել ու կոռումպացնել պետական համակարգը:

Այդ երկու կոռումպացված համակարգերի փոխարեն՝ մենք սատարում ենք ազգային սոցիալիստական համակարգին, որը սոցիալիզմի իսկական ու բնական տարբերակն է: Այն չի մերժում մասնավոր սեփականությունը և խրախուսում է արտադրական ձեռնարկությունը, որը հասարակությանը արդյունավետ բան տալու միջոց է: Ի տարբերություն կոմունիզմի՝ ազգային սոցիալիզմը բոլորին խոստանում է հավասար հնարավորություն՝ փորձելով ծանր վիճակում գտնվող մարդկանց բարձրացնել ավելի բարենպաստ պայմանների: Ազգային սոցիալիստական համակարգում միայն աշխատասեր մարդիկ առաջ կգնան, ու կգնահատվի նրանց աշխատասիրությունը, քանի որ այդպիսի համակարգում աշխատասիրությունը կհամարվի ամենաբարձր առաքինությունը և երջանկություն բերող ամենալավ ձևը: Ահա ևս մի կարգախոս՝ «Երջանկություն՝ աշխատանքով»: Նման համակարգում հասարակության մեջ ամենամեծ վարկանիշը կունենա նա, ով իր խելքով և կատարած աշխատանքով ամենաշատ օգուտն է տվել հանրությանը, և ոչ՝ նա, ով ամենաշատ փողը կամ նյութական այլ հարստություն ունի: Կարևոր է նաև, որ արժանապատվություն ունեցող ցանկացած պետություն իր բնակչությանը ապահովի անվճար ուսմամբ և բուժօգնությամբ՝ առանց որևէ տարբերակման: Ազգային սոցիալիստական գաղափարները չպիտի տարանջատվեն ցեղակրոնությունից, քանի որ ցեղակրոնության մեջ արդեն իսկ կան ազգային սոցիալիզմի սկզբունքները:

Եթե անհոգ եք՝ կարծելով, թե երբ Հայաստանը ինչ-որ գլոբալիստական միություն մտնի, մենք «լավ ենք ապրելու», ապա չարաչար սխալվում եք ու խաբվել եք թշնամական կեղծ պրոպագանդայի կողմից. նրանք ուզում են, որ մենք մեր ինքնիշխանությունը, առանց պայքարելու, հանձնենք որևէ գերտերության, որ մեր փոխարեն մեր խնիրները լուծեն: Դրանից մեր կյանքը միայն վատթարանալու է, քանի որ խախտվում է բնության օրենքը: Առանց աշխատանքի, պայքարի ու զոհաբերության՝ անհնար է ստեղծել լավ ու բարեկեցիկ կյանք մեր ներկա և ապագա սերունդների համար: Եթե որևէ քաղաքական գործիչ այս կարևոր ու աքսիոմատիկ ճշմարտությունը չի քարոզում, ուրեմն նա կա՛մ խաբեբա պոպուլիստ սրիկա է, կա՛մ գործակալ, կա՛մ երկուսն էլ:

Բոլոր առողջ տղամարդիկ պիտի կարողանան առանց դժվարության աշխատանք գտնել և իրենց ընտանիքների համար գոնե նվազագույն պայմաններ ապահովել: Առանց որևէ աշխատանքի՝ խաբեությամբ արագ գումար վաստակելը ամենամեծ մեղքերից մեկը պետք է համարվի, քանի որ մեր կերտած ապագա արիական հասարակության մեջ տեղ չի լինելու մակաբույծ ձրիակերների համար: Դրա համար պիտի արգելվեն քրեական ենթամշակույթ քարոզող երաժշտությունը, սերիալներն ու ֆիլմերը, որոնք երիտասարդությանը վարակում են ծուլությամբ ու մակաբուծությամբ: Եթե քո գոյությամբ ու գործողությամբ օգուտ չես տալիս քո

հասարակությանը ու ցեղին, ապա դու էությամբ մոլախոտ ու մակաբույծ ես:

Առհասարակ մեր ապագա ազգային պետությունը պետք է վահան լինի միջազգային հուդայական մամուլի դեմ, որը պղտորում է մարդկանց մտքերը ու կոռումպացնում հոգիները: Ազգային պետական մամուլը հզոր զենք կարող է լինել ճշմարիտ քարոզչությամբ ազգին դաստիարակելու համար: Դա անհրաժեշտ է, որովհետև եթե ազգային պետությունը չդաստիարակի իր քաղաքացիներին, նրանց ուղեղները կլվացվեն թշնամական կեղծ քարոզչությամբ: Դժվար ժամանակները ստեղծում են ուժեղ մարդկանց, որոնք բերում են լավ ժամանակներ, սակայն պետությունը, իր քաղաքացիներին շարունակաբար դաստիարակելով, պիտի ազգի իմունային համակարգը հզոր պահի, որպեսզի այդ լավ ժամանակներում չկործանվի հարմարավետության ճահճի մեջ և նորից չբերի դժվար ժամանակներ: Պնդում ենք՝ չկա ազատություն՝ առանց դաստիարակության, ինչպես չկան իրավունքներ՝ առանց պարտականությունների: Ոչ մի լավ բան այս հավերժ պայքար ունեցող աշխարհում հեշտ չի տրվում, դրա համար նաև չի կարող լինել փառք՝ առանց զոհաբերության. զոհաբերություն՝ ոչ թե անմեղ ու անպաշտպան կենդանիների, այլ՝ մեր սեփական հաճույքների՝ հանուն մի գերնպատակի: Դա է գերմարդու թիվ մեկ հատկությունը:

Գիտակցում ենք, թե որքան է հասարակության կանացիացումը վնասել հասարակության առնականությանը ու թուլամորթ դարձրել բազմաթիվ տղամարդկանց, որոնք պիտի մեր ազգի առաջնորդները ու պաշտպանները լինեն: Հասարակության մեջ առնականության հոգին կարող ենք վերականգնել այն դեպքում, երբ ազգային պետությունը ստանձնի ազգի հոր դերը՝ իր բոլոր քաղաքացիներին փորձելով դարձնել հնարավորինս անկախ ու ինքնաբավ բոլոր առումներով, և ոչ թե՝ ամեն փոքր հարցում պետությունից կախված: Քաղաքացիները կդաստիարակվեն՝ իմանալով, որ բարձր արժեքներ կրող մարդը պարտականություններ է դնում իր վրա՝ իր իրավունքների շուրջ վիճելու փոխարեն: Նման մտածելակերպով մարդը կհետապնդի վեհությունը և ոչ՝ ուրախությունը, քանի որ վեհության հետապնդումն է կերտում ազդեցիկ կյանք ու բերում երկարատև ուրախություն:

Որպես ազգային սոցիալիզմի ջատագովներ և ցեղակրոններ՝ գիտակցում ենք, որ ինչքան էլ անձնական հարստություն ունենանք, մենք չենք կարող լիարժեք երջանիկ զգալ մեր երկրում, եթե բնակչության զգալի մասը ապրում է աղքատության մեջ: Դա չի նշանակում, որ հաջողակ մարդկանցից պիտի բռնի ուժով հարստությունը խլվի և «հավասար» բաշխվի անհաջողակներին, ինչպես արել են կոմունիստական պետություններում: Այլ ընդամենը պետք է հաջողակ մարդիկ պարտականություն զգան՝ օգնելու իրենց ոչ այդքան հաջողակ եղբայրներին ու քույրերին, սակայն միայն նրա՞նք այդ օգնությանը արժանի կլինեն, որոնք նախ իրենք են փորձում իրենց օգնել: Որևէ մեկը, որ իրեն ոտքի հանելու ջանք չի թափում, արժանի չէ իր ազգակցի մեկնած ձեռքին: Պետության պատասխանատվությունն էլ պիտի լինի այդ օգնությունը տեղ

հասցնելու միջոցներ ստեղծելն ու նման արարքները խրախուսելը: Ի վերջո, ցեղակրոնությունը ենթադրում է, որ միայն տալով ենք ստանում:

Մենք չենք կարող զարգացող տնտեսություն ու հզոր պետություն ստեղծել, եթե չունենանք արդյունաբերություն, հատկապես՝ ռազմական արդյունաբերություն: Զարմանալի է, որ գրեթե ոչ մի քաղաքական կազմակերպություն կամ կուսակցություն չի խոսում այս հիմնարար ու կարևորագույն հարցի մասին: Գրեթե բոլոր քաղաքական վերլուծաբանների ու տնտեսագետների համար Հայաստանի տնտեսությունը զարգացնելու միակ ճանապարհը դրսից ներդրումներ ստանալն է, որը ցանկացած ազգայնական հայի համար պիտի անհեթեթություն համարվի: Այո՛, դրսից ներդրումներն ու զբոսաշրջությունը, իհարկե, դրական բաներ են, բայց ինչպե՞ս կարող ենք մեր ողջ երկրի տնտեսությունը դրսի հանգամանքներից կախված պահել:

Դա նշանակում է՝ եթե ողջ աշխարհը կործանվի ու մնա միայն Հայաստանը, մենք սովից կմեռնենք: Ներդրումներն ու զբոսաշրջությունը ցանկացած տնտեսության համար ընդամենը օժանդակող նշանակություն պիտի ունենան, ոչ թե ընկալվեն որպես այդ տնտեսությունը շարժող միակ գործոնները: Այս հարցը չբարձրաձայնելը համարում ենք հիմարության արդյունք կամ համակարգված դավադրություն՝ բոլոր նրանց կողմից, ովքեր ուզում են Հայաստանը տեսնել որպես լավաշի ու ծիրանի երկիր՝ հզոր արդյունաբերություն ունեցող երկրի փոխարեն:

Աներկբա ճշմարտություն է, որ չենք կարող հզոր Հայաստան ունենալ՝ առանց հզոր արդյունաբերության: Հետևաբար՝ փոքր քայլերից սկսելով՝ պիտի հասցնենք այն աստիճանի, որ Հայաստանում արտադրվի որակյալ ամեն ինչ՝ ամենափոքր շինարարական գործիքից մինչև ամենամեծ ժամանակակից տեխնիկական զենքերը: Միայն այսպիսով կարող ենք հայաստանցիների և սփյուռքահայերի մեջ արմատավորել ու զարգացնել այն գիտակցությունը, որ Հայաստանը միայն զբոսաշրջության կամ ներդրում անելու երկիր չէ, այլ՝ ապրելու, աշխատելու, ստեղծագործելու ու սերունդ տալու երկիր է: Դա կնպաստի մեծ հայրենադարձությանը: Հայրենադարձությունը անհրաժեշտություն է Սփյուռքում ապրող մեր այն հայրենակիցների համար, որոնք ուզում են իրենց ինքնությունը պահպանել, քանի որ հայը ջհուդի պես թափառական ժողովուրդ չէ, այլ Արշակ արքայի նման իր լեռնաշխարհին՝ իր հողին ամուր կպած ազգ է: Երբ ունենանք մեծ արդյունաբերություն, մարդիկ ինքնըստինքյան կցանկանան մեր երկրում ներդրումներ անել՝ առանց խնդրելու ու համոզելու: Հզոր արդյունաբերությունն է ցանկացած երկրի իսկապես անկախ ու ինքնիշխան դարձնում, և մեր ապագա գործարաններում աշխատող հայ բանվորների ամուր ձեռքերով պիտի դարձյալ դառնանք մեր ճակատագրի կերտողները:

Իհարկե չենք կարող մոռանալ հայապահպանության համար ամենամեծ դերն ունեցող հայկական մշակույթը, որից բխում է մեր հրաշալի արվեստն ու աստվածային լեզուն: Մշակույթը ազգի ներքին հոգևոր աշխարհի և գենետիկ որակի

արտապատկերումն է: Արվեստի ու լեզվի մակարդակն էլ հասարակության մակարդակի օբյեկտիվ ցուցիչներն են, քանի որ դրանք մշակույթի անկյունաքարերն են: Հետևաբար՝ ազգային պետությունը պիտի նախաձեռնի շատ կարևոր գործողություն՝ հայկական արվեստն ու լեզուն մաքրի բոլոր օտար գարշելի ազդեցություններից, և մեր հասարակության մեջ հայկականացվի ամեն ինչ՝ խանութների անուններից մինչև մեծ գործարանային ապրանքանիշերը: Եկեք մաքրենք մեր մշակույթը, որպեսզի ավելի հարգենք այն: Սա, իհարկե, չի նշանակում, որ պիտի մերժենք այլ արիական ազգերի գաղափարները, ուղղակի պիտի ազգայնացնենք ընդունվածը՝ վերցնելով այն, ինչ օգտակար է, դեն նետելով այն, ինչ օգտակար չէ, և ավելացնելով այն, ինչ բացառապես մերն է: Մեր կարգախոսներից մեկն է՝ «Պատվի՛ր մշակույթդ, սիրի՛ր ազգդ, պաշտպանի՛ր հայրենիքդ»:

Ամենակարևորը՝ մերժում ենք պարտվողականությունը, օտարամոլությունը, թուլությունը, ստրկամտությունը, որոնք մեր ազգին շղթայված են պահել դարեր շարունակ: Մերժում ենք նաև ստախոսությունը և հասկանում ենք՝ այս կեղծիքների դարաշրջանում ճշմարտություն խոսելը և ճշմարիտ գործելը դարձել են հեղափոխական գործողություններ: Մեզ համար կարևոր է ճի՛շտ լինելը և ոչ՝ քաղաքականապես ճիշտ լինելը, քանի որ ինչպես արդեն նշվեց, մենք հասել ենք մեր պատմության ամենաօրհասական ժամանակին՝ պետականության վերջնական կորստի վտանգին, և պետք է անենք ամեն ինչ, օգտագործենք ամեն անհրաժեշտ միջոց՝ մեր ազգին ոտքի հանելու ու Հայրենիքը փրկելու համար՝ թքած ունենալով բոլոր նրանց կարծիքների վրա, ովքեր ուզում են Հայաստանը ոչնչացնել կամ ծնկած պահել:

«Հոսանքի» խոհրդանիշն ու դրոշն է հայկական հավերժության նշանը՝ սև ու սպիտակով՝ կարմիր ֆոնի վրա, որը գալակտիկայի պտույտներով խոհրդանշում է տիեզերքում երկու հակադիր ուժերի միասնությունը, առանց որի՝ տիեզերքում չի լինի արարում: Հավերժության նշանի պտույտը բնութագրում է հենց «Հոսանքը»՝ ցեղի հավիտենական շարժումը: Կարմիրն էլ խորհրդանշում է ցեղի արյունը՝ այն օղակը, որի միջոցով մենք կարող ենք կապվել Արարչին ու արարչաստեղծ գործընթացին: Հավերժության նշանն էլ ունի ութ թև՝ չորս սպիտակ, չորս սև, որովհետև ութ թիվը ոչ միայն հայկական մշակույթում ամենատարածված թիվն է, այլև մաթեմատիկայի ու գիտության մեջ մեծ նշանակություն ունեցող թիվ (∞): Ութ թիվը մաթեմատիկայի մեջ հենց հավերժության նշանն է: Մենք ապրում ենք քառաչափ (երեք առանցքները՝ ժամանակի հետ) իրականության մեջ, բայց այդ իրականությունը բաղկացած է «սիս» (փոքր) և «մասիս» (մեծ) աշխարհներից, որի համադրությունը տալիս է ութչափանի տարածություն:

Արարիչը անսահման գիտակցությունն է՝ տիեզերքի հոգին, և մեր հոգին ևս այդ տիեզերական գիտակցության մի չնչին մասն է կազմում: Այդպիսով՝ կարող ենք համարել, որ մենք ինքներս Արարչի դրսևորումներն ենք, և արիական ցեղը՝ Արարչի

ամենամեծ գլուխգործոցը: Մենք հոգի ենք, որ ունենք մարմին, ոչ՝ հակառակը, և յուրաքանչյուրիս հոգու բաղձանքն է մեր սեփական կյանքը, որը ընդամենը մի ակնթարթ է տիեզերքի պատմության համար, կապել մեզնից ավելի վեհ բանի հետ: Ժամանակակից աշխարհի գերհագեցած կյանքը մարդկանց կտրել է այդ կարևոր գաղափարից: Ընդհանրապես, երբ թերթում ենք պատմության էջերը, գալիս ենք այն եզրահանգման, որ հարմարավետությունը ծնում է թուլություն, իսկ պայքարը՝ հզորություն: Բոլորս ցանկանում ենք լավ ու հարմարավետ ապրել, բայց շատ ավելի կարևոր է իմաստալից, արդյունավետ ու արտառոց կյանք ապրելը, քանի որ չկա ավելի զարհուրելի բան, քան աննպատակ գոյությունը: Այդ աննպատակ գոյությունից է առաջանում նողկալի օտարացումը, հեդոնիզմը, նիհիլիզմը, աթեիզմը, ու նյութապաշտությունը:

Մերժում ենք նյութապաշտությունը, բայց գիտակցում ենք, որ ապրում ենք նյութական իրականության մեջ, և հանուն ցեղի՝ նյութական ռեսուրսներ ձեռք բերելը մեր կյանքի ամենակարևոր առաջադրանքներից մեկը պետք է լինի: Այսինքն՝ նյութապաշտություն չենք համարում, եթե նյութական ձեռքբերումները մեզ համար միջոց է և ոչ՝ նպատակ: Հանդիսատես լինելու փոխարեն՝ բոլորս կարող ենք մասնակից լինել պատմության գործընթացին. անկախ նրանից՝ ուսուցիչ ենք, թե՝ ոստիկան, բանվոր ենք, թե՝ գրող կամ բազմազավակ մայր՝ բոլորս, մեր լուման ներդնելով, կարող ենք զարգացնել մեր քաղաքակրթությունը: Չարը կարողանում է հաղթել միայն նրա համար, որովհետև բարի ու արժանապատիվ մարդիկ անգործություն են ցուցաբերում:

Մեր յուրահատուկ ու անցողիկ կյանքը հավիտենական ու մնայուն ցեղին ծառայեցնելով միայն կարող ենք անմահանալ: Դա է անմահության բանալին ու միակ ճանապարհը, հետևաբար՝ հանուն ցեղի առաջընթացի՝ պետք է շատ արդյունավետ ապրենք, որովհետև մենք մեզ հետ ոչինչ չենք կարող տանել մյուս աշխարհ. մենք միայն կարող ենք այս աշխարհում որևէ բան թողնել, և այդ թողածը պետք է լինի ազգանպաստ աշխատանքը: Ազգանպաստ աշխատանքը միայն առաքինի ու արդար աշխատանքը կարող է լինել: Մենք մեր հայրերով նայում ենք դեպի անցյալ, իսկ որդիներով՝ դեպի ապագա, հետևաբար՝ մեր պարտականությունն է, որ այն ամենը, ինչ ստացել ենք մեր հայրերից՝ բարելավենք, զարգացնենք ու փոխանցենք մեր որդիներին:

Սակայն այդ ամենը չի ստացվի, եթե պղտորվի ցեղի արյունը: Որքան մաքուր լինի ցեղի արյունը, այնքան ավելի կայտառ կլինի ցեղի հոգին և հզոր կլինի կապը Արարչի հետ: Երբ բարձր ցեղը խառնվում է ավելի ցածր ցեղի հետ, արդյունքում բարձր ցեղը իջնում է ցածր ցեղի մակարդակին՝ կորցնելով իր ցեղի հզորության հատկությունը: Պատմության մեջ մշակույթների և քաղաքակրթությունների վերացման թիվ մեկ պատճառը ոչ թե պատերազմներն են եղել, այլ՝ արյան պղտորումը: Հետևաբար՝ մեր ամենակարևոր կարգախոսներից մեկն է՝ «Հայաստանը՝

հայերին»: Ապագա Հայաստանում միայն նրանք կարող են Հայաստանի լիարժեք քաղաքացի լինել, ովքեր կրում են արիական արյուն, բոլոր օտարներն էլ կարող են Հայաստանում մնալ ընդամենը որպես ժամանակավոր հյուր: Սա չի նշանակում, որ մենք ատում ենք այլ ազգերին, ընդհակառակը՝ միայն «մեկ արյուն - մեկ հող» սկզբունքով կարող է ամեն ազգի յուրահատկությունը պահպանվել, քանի որ կործանարար բազմամշակութայնությունը ոչնչացնում է Արարչի ստեղծած բնության մեջ բազմազանությունը: Լավ սահմանները «ստեղծում են» լավ հարևաններ: Պնդում ենք, որ միայն ազգին ծառայելով կարող ենք ծառայել մարդկությանը ու դատապարտում ենք «հավասարություն» քարոզող կեղծ մարդասիրությունը: Ընդհանրապես զավեշտալի ենք համարում «հավասարություն» հասկացությունը, քանի որ աշխարհում ու բնության մեջ չկա ոչ մի հավասարություն:

Նման կեղծ գաղափարներ քարոզելը մարդկանց խաբելու ու մոլորեցնելու համար է միայն: Դեմ չենք մեր հայրենիքում ապրող այլ սպիտակ-արիացի փոքրամասնություններին, բայց ճնշող մեծամասնությունը (90%+) միանշանակ պիտի հայ լինի: Պետք է շտապ կասեցվի այն մարդկանց ներգաղթը, որոնք սպիտակ-արիացիներ չեն, և նրանք պետք է խաղաղորեն արտաքսվեն մեր Հայրենիքից, իսկ նրանց համար դարպասներ բացողները պիտի խստիվ դատվեն ու պատժվեն: Պիտի դատվեն ու պատժվեն նաև խառը ամուսնություններ քարոզողները: Հայաստանը Բաբելոնի վերածելու ո՛չ մտադրություն ունենք, ո՛չ էլ՝ ցանկություն: Մեզ պետք չէ ստրկական դասակարգ՝ էժան աշխատուժով քողարկված, քանի որ մենք մեր թևքերը քշտելով պիտի անցնենք գործի և մեր սեփական ուժերով շենացնենք մեր երկիրը: Մենք պիտի մեր կոյուղիները մաքրենք, մեր աղբը հանենք, մեր շենքերը կառուցենք, մեր բեռնատարները վարենք, մեր ասֆալտները փռենք, մեր հողերը մշակենք՝ առանց այլ ազգերից կախված լինելու, քանի որ դրանք չանելով՝ հետագայում մենք ինքներս մեզ ենք ստրկացնելու:

Մարդկությունը բաժանված է մատների վրա հաշվվող մի քանի ցեղի, որի ամենագեղեցիկ, ամենահզոր, ամենաստեղծագործ ցեղը սպիտակ-արիական ցեղն է և որի գիտական անունը Արմենոիդ է (և ոչ՝ արհեստածին «Կովկասոիդ» անվանումը): Մեր հայ ազգը պատկանում է մյուս բոլոր ցեղերի մեջ փոքրամասնություն կազմող սպիտակ-արիական ցեղին, որը բաղկացած է հանճարեղ գիտնականներից, հետազոտողներից, ռազմիկներից, արվեստագետներից, ճարտարապետներից, իմաստասերներից և նվաճողներից: Աշխարհում կա գրեթե 8 միլիարդ մարդ, և այդ 8 միլիարդից ընդամենը 500 միլիոնն է սպիտակ-արիացի, ու գնալով այդ թիվը նվազում է ցածր ծնելիության պատճառով, իսկ ոչ սպիտակ-արիացիների թիվը՝ գնալով աճում: Սպիտակ-արիացիների ծնելիության աճը ցածր է, որովհետև միջազգային սիոնիզմը բոլոր միջոցներով քարոզում է ֆեմինիզմ, հղիության արհեստական ընդհատումներ, համասեռամոլություն, խառը ամուսնություններ, ոչ սպիտակ-արիացիների ներգաղթ և նմանատիպ այլ վնասակար

գաղափարներ: Եթե այս տեմպերով շարունակվի, և կտրուկ փոփոխություններ չկատարվեն, 21-րդ դարը լինելու է ոչ թե մերը, ինչպես Սպարապետն էր համոզված ասում, այլ մեր և ողջ արիական ցեղի վերջին դարը, որը Երկիր մոլորակը կտանի դեպի խավարում: Սա օբյեկտիվ փաստ է, որը կարող ենք հիմնավորել վիճակագրական տվյալներով: Միջազգային սիոնիստները շատ լավ հասկանում են, որ եթե տիրեն և ստրկացնեն արիական ցեղին, կտիրեն ու կստրկացնեն ողջ մարդկությանը: Սա մեզ՝ հայերիս համար շատ կարևոր է ըմբռնել, եթե ուզում ենք ավելի մեծ պատկերը տեսնել, թե ինչի համար են մեր դեմ այսքան դավեր նյութվում: Թիրախում ոչ միայն մեր ազգն է, այլև ողջ արիական ցեղը: Ինչպես անհատը չի կարող փախչել իր ազգի ճակատագրից, այնպես էլ ազգը չի կարող փախչել իր ցեղի ճակատագրից:

Մեր ազգի և ողջ արիական ցեղի ճակատագրերը շաղկապված են, դրա համար «Հոսանքի» հեռանկարային նպատակն է ստեղծել համարիական միություն՝ միջազգային սիոնիզմի և պանթուրքիզմի դեմն առնելու համար, որովհետև իսկական դաշինքը կարող է հիմնվել միայն ընդհանուր ցեղային շահերի վրա:

Ցավոք, դարերի ընթացքում պետականություն չունենալու և շատ վայրենի ոչ արիական ցեղերի հետ շփվելու արդյունքում չափազանց վատթարացել է մեր ազգի գենետիկ որակը: Այդ վատթարացման գործընթացին նպաստել են նաև տեխնոլոգիական դարաշրջանը ու ֆեմինիզմի նման գաղափարական հիվանդությունները: Ֆեմինիզմը ոչ թե կանանց «ազատագրել» է, ինչպես հորհորջում է ստախոս միջազգային հուդայական մամուլը, այլ մոլորեցրել ու ստրկացրել է նրանց՝ շեղելով ամենաբնական բնազդից՝ մայր դառնալուց: Նրանք են «սեռական հավասարություն» քարոզում, ովքեր թքած ունեն կանանց և կանացիության վրա: Տղամարդիկ տաժանակիր և դժվար աշխատանքներն անում են, որպեսզի մեր սիրելի կանայք, մայրերը և քույրերը հեռու մնան նման գործերից ու ապահով լինեն: Մայրությունից ավելի սուրբ բան չկա, քանի որ մեր ազգի կյանքը սկսում է հենց մեր կանանց արգանդներից: Առանց մայրությանը սատարելու և աջակցելու՝ չենք կարող ապագա ապահովել մեր գալիք սերունդների համար: Բնականաբար սա նշանակում է, որ տղամարդիկ էլ պետք է հայրանան, ու ամուրի ապրելակերպը պետք է դատապարտվի:

Հարկավոր է եվգենիկայի միջոցով բարձրացնել գենի որակը և մաքրել մեր արյունը: Սրանից բխում է այն կարևոր սկզբունքը, որ երեխա ունենալը արտոնություն է և ոչ՝ իրավունք: Առանց եվգենիկայի սկզբունքները կիրառելու՝ մեր ազգը ու առհասարակ ողջ արիական ցեղը գնալու է և արդեն գնում է դեմոգրաֆիական ոչնչացման: Պետության ամենակարևոր նպատակներից մեկը պետք է լինի ծնելիության աճը ապահովելը: Դա նշանակում է, որ ազգային պետությունը պետք է ամեն ինչ անի՝ առողջ զույգերին ֆինանսապես ապահովելով խրախուսի, որ ունենան առնվազն չորս երեխաներ: Ազգային պետական մամուլը պիտի փառաբանի, ու պետությունը հերոսի կոչում տա այն կանանց, որոնք ունենում են չորսից ավել

երեխաներ: Առանց ամուր ու առողջ ընտանիքի՝ չի կարող լինել ամուր ու առողջ հասարակություն, քանի որ ընտանիքը ցանկացած հասարակության միջուկն է: Սա լինելու ու շատանալու անհերքելի առհավատչյան է:

Ըստ եվգենիկայի ու մեր պատկերացմամբ՝ թերի ու հոգեկան հիվանդները պիտի ստերջացվեն: Շատերը սա ծայրահեղություն կհամարեն, բայց մեր երկիրը հասել է այս ծայրահեղ վիճակին, որովհետև չեն կիրառվել եվգենիկայի սկզբունքները, ու նման մարդիկ ոչ միայն չեն ստերջացվել, այլև ընտրություններին մասնակցելու հնարավորություն են ունեցել: Սա պատճառներից մեկն է, որ ունեցանք նման այլասերված կառավարություն, քանի որ յուրաքանչյուր ժողովուրդ արժանի է իր կառավարությանը: Ընտրություններին մասնակցնելն էլ պիտի լինի արտոնություն և ոչ՝ իրավունք: Եթե ապագայում լինեն ընտրություններ, բոլորը չպիտի կարողանան մասնակցել և բոլորի ձայները հավասար չպիտի հաշվվեն: Արդար չէ գիտնականի կամ սպայի ձայնը հավասար հաշվել մի հանցագործ կամ դատարկաբան բազմոց քշողի ձայնի հետ: Ցանկացած բերք ունենում է վատ պտուղներ, բայց անհրաժեշտ է, որ պետությունը այդ «բերքը» հնարավորինս զերծ պահի այդ վատ «պտուղներից»: Չենք կարող մեր ուզած՝ արժանապատիվ մարդկանցից բաղկացած վերոհիշյալ «արքայապետությունը» ստեղծել՝ առանց եվգենիկայի սկզբունքների լուրջ կիրառման:

Արյան մաքրությունը անհրաժեշտություն է, բայց առանց հողի՝ հայրենիքի և պետականության՝ ազգը չի կարող այս աշխարհում իր կամքը թելադրել, դրա համար ազգայնականը չի կարող հայրենասեր չլինել, ինչպես հայրենասերը չի կարող ազգայնական չլինել: Ամեն թիզ հող մեզ համար չի կարելի փոխարինել նույնիսկ տոննաներով ոսկու հետ: Հողից ավելի մեծ հարստություն չկա Երկիր մոլորակի վրա: Յուրաքանչյուր քաղաքացի պիտի խորը գիտակցի, որ իր տունը սահմանափակված չէ իր չորս պատերով, այլ՝ իր հայրենիքի սահմաններով, և ամեն ծառ, գետ, սար կամ լիճ իր տան մի մասն է: Միայն այդ գիտակցությամբ կիմանա, որ իր տունը սկսում է սահմանի յուրաքանչյուր դիրքից և այդ դիրքը պարտավոր է պաշտպանել, ինչպես կպաշտպանի իր սեփական տունը: Վտանգների ժամանակ առաջնագիծ մեկնելը երբեք հերոսություն չպիտի համարվի, այլ ընդամենը՝ պարտականություն: Այսպես կարելի է ոչնչացնել մեր ազգի մեջ աղետալի ու պառակտող գավառամիտ հայրենասիրությունը:

Պետությունը՝ որպես գերագույն արժեք, ազգին հողի հետ կապող օղակն է. պետությունը պարտավոր է ծառայել ազգին ու առաջ տանել Հայրենիքի շահերը: Պետությունը անոթ է, որի պարունակությունը ազգն է, և այդ անոթը կարող է իմաստ ունենալ, եթե կարողանա պահպանել և պաշտպանել իր ներսում գտնվող նյութը: Ահա մեր սուրբ երրորդությունը՝ ազգ, հայրենիք, պետություն:

Մեր բոլոր բանակցությունների ու որոշումների ժամանակ պետք է հաշվի առնվի այս ամենը: Մեր ողջ մշակույթը, գիտությունը, մտքերը, գործողությունները և

քայլերը պետք է ծառայեն ցեղի հզորացման նպատակին: Այս ամենը նախադրյալներ են և անհրաժեշտություն՝ առողջ ու առաջադեմ հասարակություն ստեղծելու համար. հասարակություն, որը բաղկացած կլինի անձնական պատասխանատվություն կրող, պարտականություններ ճանաչող, աշխատասեր, ազնիվ, առողջ և զտարյուն արժանապատիվ քաղաքացիներից: Մենք պիտի ստեղծենք լիովին նոր մարդ, նոր պետություն, նոր հասարակություն, նոր քաղաքակրթություն և այդ փառահեղ ապագայի սերմերը հենց հիմա պիտի ցանվեն:

Մեր շարժումը մեր գաղափարների ու խորհրդանշի նման անմահ է, և նման գաղափարներ ու անպարտելի դրոշ կրելով՝ մենք այս պայքարում մեր աչքերը չենք սևեռել հաջորդ տարվա, հաջորդ ընտրությունների կամ նույնիսկ հաջորդ տասնամյակի վրա, այլ՝ հավերժության վրա: Այս ճակատագրական պայքարի արդյունքը ունի ընդամենը երկու տարբերակ. կա՛մ մեր թշնամիները կանցնեն մեր դիակների վրայով, կա՛մ մենք՝ նրանց դիակների վրայով: Ամեն ինչ գալիս է ի շրջանս յուր. Վահագնը կհաղթի վիշապին, Հայկը կհաղթի Բելին: Ժամանակն է, որ մեր պատմության վերջին էջը թերթելու փոխարեն՝ ոսկե տառերով նոր էջ բացենք՝ դարձյալ ստանձնելով արիականության և արդարության առաջնորդ ազգի դերը:

Վաղուց հասկացել ենք, որ մեր հասարակության հիվանդությունները չենք կարող բուժել ընդամենը քվեաթերթիկների, բարեփոխումների կամ պահպանողական միջոցներով, որոնք ընդամենը պահպանում են ներկա ստատուս քվոն: Մեզ միայն ցեղային արժեքների վրա հիմնված գիտակցության հեղափոխությունը կարող է ոտքի հանել: Ծայրահեղ ժամանակները պահանջում են արմատական միջոցներ, և մեր հիմնարար գաղափարները ու սկզբունքները զիջման ենթակա չեն: Արիական մակընթացությունը հորիզոնում է, և առանց որևէ կասկածի՝ շեշտում ենք, որ միայն Հայաստանից կարող է գալիք արիական հազարամյակի կայծը սկսվել, որը հրդեհի պես կտարածվի արիական մյուս երկրներ:

Մենք հավատում ենք, որ Հայաստանը դառնալու է համաշխարհային քաղաքակրթության վերածննդի և մարդկության փրկության տապանը: Մենք հավատում ենք, որ Հայաստանը նորից կդառնա Արևմուտքն ու Արևելքը, Հյուսիսն ու Հարավը իրար կապող քաղաքակրթական ճանապարհների կարևոր հանգույցը: Մենք հավատում ենք, որ Հայաստանը պիտի դառնա ոչ միայն այս տարածաշրջանում, այլև ամբողջ աշխարհում ամենահզոր երկրներից մեկը, որի հետ բոլորը ստիպված են լինելու հաշվի նստել: Քանի որ Հայաստանը քաղաքակրթության և արիականության բնօրրանն է, հավատում ենք այս պատմական սուրբ առաքելությանը, որը մեզ՝ արորդիներիս է տվել Տիեզերքի Արարիչը:

Իրականում «Հոսանքը» գլոբալիզացիայի և ժամանակակից Բաբելոնի համար ներկայացնում է շատ վտանգավոր գաղափար՝ իսկապես ազատ ու անկախ Հայաստան: Այդ գաղափարից մենք չենք կարող հրաժարվել՝ անկախ նրանից, թե որքան խոչընդոտներ կդրվեն մեր առջև: Մենք պիտի հոգեպես պատրաստ լինենք

հերթով ջախջախելու այդ ամենը և չեզոքացնելու մեր դեմ ուղղված բոլոր գրոհները: Մեր մարտահրավերները անթիվ են, և պիտի կատարենք անկատարելին ու դա անելու համար պետք է մեր «զինանոցից» օգտագործենք մեր ամենահզոր «զենքերը». հավատարմությունը, նպատակասլացությունը, քաջությունը, նվիրվածությունը, քրտնաջան աշխատանքը, և հաստատակամությունը, սակայն եթե այդ «զենքերն» էլ չհերիքեն, մենք կփոխհատուցենք կամքի ուժով:

Վստահ ենք մեր հաղթանակի վրա, որովհետև այս աշխարհում չկա ավելի հզոր ուժ, քան մի գաղափար, որի ժամանակը հասունացել է: Որքան էլ այժմ աներևակայելի թվա այս նպատակների իրագործումը, այնուամենայինիվ այս ամենը պետք է լինի մեր գերագույն տեսլականը, որից իրավունք չունենք շեղվելու, քանի որ մեր նպատակը Արարչի նպատակն է:

Հայկ Նազարյան
www.hosank.net
info@hosank.net